



Պաշտոնը: Ֆինանսական պլանավորման մասնագետ-վերլուծաբան

Պայմանները: Լրիվ դրույք

Տևողությունը: Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

Գտնվելու վայրը: ք. Երևան

Դիմումների ընդունման սկիզբը: 15.11.2017թ.

Դիմումների ընդունման վերջնաժամկետը: 23.11.2017թ.

Աշխատանքային պարտականությունները:

- Կազմում է Ընկերության եկամուտների և ծախսերի նախահաշիվները,
- Մասնակցում է Ընկերության գործարար և վերաապահովագրության ծրագրերի կազմմանը,
- Աջակցում է Ընկերության գնումների պլանի կազմման աշխատանքներին,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով անմիջականորեն իրականացնում է Ընկերության հաշվապահական հաշվառման վարման աշխատանքները,
- Իրավական ակտերով սահմանված ժամկետներում և կարգով կազմում է Ընկերության՝ իրավական ակտերով պահանջվող հաշվետվությունները և ներկայացնում գլխավոր հաշվապահին,
- Ապահովում է ներքին իրավական ակտերով սահմանված կամ գլխավոր հաշվապահի հանձնարարությամբ իրեն ամրագրված գրանցամատյանների վարման աշխատանքները,
- Կատարում է Ընկերության աշխատողների աշխատավարձերի, արձակուրդային վճարների, վերջնահաշվարկների սահմանված կարգով հաշվարկման և վճարման աշխատանքները, ինչպես նաև հաշվարկում և սահմանված ժամկետներում ապահովում է համապատասխան հարկային վճարումները,
- Հսկում է հիմնական միջոցների և ապրանքանյութական արժեքների ընդունման, բաց թողնման, դրանց շրջանառության ձևակերպման աշխատանքները,
- Գլխավոր հաշվապահի հետ համաձայնեցնում է Ընկերության հաշվապահական հաշվառման աշխատանքների հետ կապված հարցերը, նրան ներկայացնում Ընկերության հաշվապահության աշխատանքներում հայտնաբերված սխալների, բացթողումների վերաբերյալ առաջարկություններ,
- Կատարում է Ընկերության վերադաս ղեկավարության կողմից տրված լրացուցիչ հանձնարարականներ:



Պահանջվող որակավորումները և հմտությունները:

- Բարձրագույն մասնագիտական կրթություն ֆինանսների, հաշվապահության, գործարար կառավարման ոլորտներում,
- Առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ,
- Ապահովագրության և ֆինանսատնտեսական ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության և նորմատիվ իրական ակտերի գերազանց իմացություն,
- Ընկերության գործունեությանն առնչվող Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) իմացություն,
- Վերլուծական հմտություններ,
- Հաղորդակցվելու և բանակցելու գերազանց կարողություն,
- Պատասխանատվություն և մանրուքների նկատմամբ ուշադրություն,
- Սուղ ժամանակային պայմաններում աշխատելու ունակություն,
- Թիմում աշխատելու հմտություն,
- Հայերեն լեզվի գերազանց իմացություն, ռուսերեն և անգլերեն լեզուների լավ իմացություն,
- Համակարգչային գիտելիքներ՝ MS Office , AS Accountant:

Դիմելու ընթացակարգը: Խնդրում ենք Ձեր ինքնակենսագրությունը ուղարկել info@eia.am էլեկտրոնային հասցեին՝ նամակի “Թեմա” տողում նշելով « Ֆինանսական պլանավորման մասնագետ-վերլուծաբան» վերնագիրը: